

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻԿՈՆՈՄԻԿԱՑԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Հ. Բ. ՂՈՒԾՉՅԱՆ, Լ. Հ. ՂՈՒԾՉՅԱՆ

Ազատության պահանջը մշտապես դրվել է մարդկանց քաղաքական պայքարի, սոցիալական հավասարության ստեղծման և տնտեսական գործունեության կազմակերպման սկզբունքների շարքում: Սակայն ազատության բովանդակությունը մարդու կողմից միանշանակ չի ընկալվել մարդկային հասարակության զարգացման տարբեր աստիճաններում: Այժմ նույնպես, ազատությունը հաճախ ընկալվում է քաղաքական, տնտեսական, սոցիալական, նույնիսկ բնապահպանական առումներով, իսկ հասարակագիտական մտքի ներկայացուցիչները մշտապես բանավիճում են դրանց փոխհարաբերության մասին:

Իսկ ո՞րն է դրանցից ավելի կարևորը, որոշիչը, առաջնայինը: Մտադրություն չունենալով ներկայացնելու դրանց փոխհարաբերության բարդ ու հակասական ամբողջ դիալեկտիկան, ներկա հոդվածում մեր առջև նպատակ ենք դրել ցույց տալ, որ որոշիչը տնտեսական ազատությունն է, քանզի քաղաքական ազատությունը չի կարող իր ողջ էությունը դրսևորվել առանց տնտեսական ազատության առկայության, իսկ վերջինս կարող է գոյություն ունենալ միայն տնտեսական որոշակի համակարգի գործունեության համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում, որոնց ստեղծման ու կարգավորման գործում մեծ դեր ունի պետությունը: Նման դատողությունը միայն տնտեսագետին հատուկ մտածողության արդյունք չէ: Իրականում ազատ հասարակության ծաղկմանը տնտեսական համակարգը նպաստում է երկու առումով: Մի կողմից տնտեսական հարաբերությունների ազատությունը ինքն իրենից ներկայացնում է լայն առումով ազատության հանգուցային բաղադրամասը, ուստի տնտեսական ազատությունը որոշ առումով ինքնանպատակ է: Մյուս կողմից՝ տնտեսական ազատությունը լայն առումով ազատության հասնելու անհրաժեշտ միջոց է:

Սովորաբար ինտելեկտուալները, հատկապես քաղաքական տարբեր հոսանքների առաջնորդները, գտնում են, որ ազատությունը հիմնականում քաղաքական է, քանի որ կասկածամտորեն են վերաբերում կյանքի նյութական կողմին և իրենց անձնական ձգտումը ավելի բարձրարժեք են համարում: Եթե իրոք դա այդպես չէ, ապա նրանք նման միտումներ դրսևորում են մինչև քաղաքական իշխանության նվաճումը, որից հետո այն օգտագործում են տնտեսական ազատության համար: Իր հերթին հասարակության անդամների մեծ մասը հաճախ տնտեսական ազատության անմիջական կարևորությունը տեսնում է նրա անուղղակի նշանակությամբ, որպես քաղաքական ազատության հասնելու միջոցի:

Իրական կյանքում այդ երկուսը զուգորդվում են իրար հետ, և յուրաքանչյուր մարդու համար անիմաստ է դառնում մեկի գոյությունը առանց

մյուսի: Այսպես, յուրաքանչյուր հայ մարդու համար երազանք է բարձրանալ Մասիսի գագաթը: Սակայն այսօրվա տնտեսական պայմաններում, եթե գոյություն չունեն նույնիսկ Հայաստանի տնտեսության լեռները բարձրանալու հնարավորություններ (տրանսպորտի բացակայության պատճառով), ապա Մասիս բարձրանալու հնարավորությունն անգամ տնտեսապես անիրագործելի է: Այդ է պատճառը, որ տնտեսական ազատությունն իրենից ներկայացնում է ազատության ընդհանուր բովանդակության ամենակարևորագույն մասը, առանց որի քաղաքական ազատությունն առարկայական չի դառնում:

Այդ նույն ձևով մեր հանրապետության օրինակը ցույց տվեց, որ քաղաքական անկախությունը դեռևս ամբողջական ազատության և անկախության վճռական պայման չէ, որ առանց տնտեսական ազատության դեռևս լիիրավ անկախության հասնել չենք կարող:

Տնտեսական ազատության ապահովման պայմանը այնպիսի տնտեսական համակարգի ստեղծումն է, որը օբյեկտիվ պայմաններ չի ստեղծում իշխանության խտացման ու կենտրոնացման համար: Այդպիսի տնտեսական կառուցվածքը պետք է ապահովի իրական տնտեսական ազատություն, նպաստի քաղաքական ազատության ավելացմանը, անջատի տնտեսական ազատությունը քաղաքականից և հնարավորություն տա մեկը մյուսին հակակշիռ լինելու:

Տնտեսական նախկին համակարգի պայմաններում տնտեսական իշխանության կենտրոնացումը հասել էր այնպիսի բացարձակ շահերի, որ քաղաքական իշխանության նույնիսկ անիմաստ գործողությունները հասարակության կողմից արգելվել չէին կարող: Հիշենք նախկին ԽՍՀՄ անիմաստ ու անթույլատրելի միջամտությունը Անգոլայի, Աֆղանստանի, Եթովպիայի քաղաքական համակարգերի ստեղծմանը: Նշանակում է, քաղաքական իշխանության բացարձակ կենտրոնացման հակակշիռ կարող է լինել միայն տրնտեսական ազատ ձեռնարկատիրության և մրցակցության պայմանների ըստեղծումը, որը վերջին հաշվով սեփականության ձևերի բազմազանության ստեղծման պահանջ է առաջադրում:

Ազատ սեփականատերերի գոյությունը հնարավորություն է տալիս դրսևւորել տնտեսական լիակատար ազատություն՝ մտնելու կամ չմտնելու տրնտեսական ցանկացած գործարքի մեջ, դրսևորելու միավորման, կոոպերացիայի զանազան ձևեր կամ մրցակցելու շուկայական պայքարի ընթացքում:

Տնտեսական նման ազատությունը յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի համար (լինի այն պետական, բաժնետիրական, կոոպերատիվ ձեռնարկություն թե անհատական տնտեսություն) պետք է սահմանափակել տնտեսական ընդհանուր համակարգի զարգացման խնդիրներին ծառայելու, հասարակական ընդհանուր առաջընթաց ապահովելու պահանջների հիման վրա: Տրնտեսական համակարգը պետք է ապահովի տնտեսավարող բոլոր սուբյեկտների իրավահավասար գործունակության պայմաններ ու իրավունքներ, տրնտեսական որոշումներ կայացնելու լիակատար ազատություն, այդ որոշումների կատարման հավասարազոր տնտեսական պատասխանատվություն: Առաջին հայացքից թվում է, թե տնտեսավարող սուբյեկտների լիակատար տրնտեսական ազատությունը սեփական որոշումներ կայացնելու հարցում կարող է հանգեցնել քաոսային իրավիճակի: Մինչդեռ տնտեսավարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տնտեսական տվյալ համակարգի ընդհանուր խնդիրների իրագործումը կատարում է այն պարզ պատճառով, որ դեռևս չլուծված խնդիրների կատարման ընթացքում տնտեսավարող սուբյեկտները որոշակի տնտեսական առավելություն են ստանում իրենց տնտեսության բարգավաճման ճանապարհին: Այդ է պատճառը, որ տասնյակ միլիոն բնակչություն ունեցող քաղաքների մատակարարումը բանջարեղենի, հացամթերքների կամ կաթնա-

մթերքների գծով կատարվում է այնպիսի կազմակերպվածություններ, որ շատ հաճախ միասնական ծրագրով սահմանվող ու կառավարվող համակարգերը նման գործընթացը նույն հաջողությամբ իրագործել չեն կարողանում:

Իրոք, տնտեսավարող սուբյեկտների մրցակցության պայմաններում նը-
րանցից յուրաքանչյուրն իր գործունեության արդյունքների պատասխանատ-
վությունը կրում է ինքնուրույնաբար, ոչ ոք նրան չի ների վրիպումների, ար-
տադրության անարդյունավետ կազմակերպման, սպառողներին ժամանակին
չմատակարարելու կամ այլ թերացումների համար: Այդ է պատճառը, որ շու-
կայական մրցակցությունը ոչ միայն տնտեսական ազատության ապահովում
է, այլ նաև տնտեսավարողների հավասարության գրավական:

Տնտեսավարողների հավասարությունը հավասար արդյունքներ ձեռք բե-
րելու գրավական չէ: Խոսքն այն մասին է, որ տնտեսավարող սուբյեկտները
դտնվեն տնտեսական ինքնուրույնության նույնպիսի շրջանակներում:

Փորձենք տնտեսական ինքնուրույնության շրջանակները պատկերացնել
կենտրոնացված կառավարման ու պլանավորման և շուկայական էկոնոմի-
կայի պայմաններում:

Միանգամայն պարզ ու բնական էր, որ արտադրության միջոցների միա-
տարր հասարակական սեփականության պայմաններում տնտեսավարող յուրա-
քանչյուր սուբյեկտի ռեսուրսներ մատուցվում էին հասարակության կողմից,
որ վերջինս պատվիրում էր իրեն անհրաժեշտ արտադրանքի արտադրությունը,
սահմանում արտադրության կազմակերպման պայմանները, կարգադրում ար-
դյունքի բաշխման կարգը, սահմանում նրա գործունեության շրջանակները,
ապահովում վերարտադրության կազմակերպման ընթացքը: Այդ պայման-
ներում լավագույն թե վատագույն արդյունքները պատկանում էին հասարա-
կությանը, իսկ տնտեսավարող սուբյեկտները ձեռք բերված արդյունքի համար
հիմնականում կրում էին բարոյական պատասխանատվություն: Ձեռք բերված
արդյունքները էական ազդեցություն չէին գործում տնտեսավարող սուբյեկտ-
ների հետագա ճակատագրի վրա, քանի որ շատ հաճախ լավագույն արդյունք-
ներ ունեցողները կարող էին ավելի քիչ ռեսուրսներ ստանալ իրենց հետագա
դարգացման համար, քան վատագույն արդյունքներ ունեցողները: Նպատակ
չհետապնդելով քննարկելու այդ համակարգի ընդհանուր դրական կողմերն ու
թերությունները, ցանկանում ենք հիշատակել միայն, որ նման մեխանիզմում
տնտեսավարող սուբյեկտների համար իրական տնտեսական ինքնուրույնու-
թյուն ու ազատություն գոյություն չունեն, քանի որ նրա համար սահմանվում
էին ոչ միայն տնտեսավարման կանոնները, այլև տնտեսավարման ընթացքն
ամբողջությամբ վերցրած:

Նկատի ունենալով տնտեսավարման ընթացքի ամբողջական սահմանա-
փակումը, ինչպես 60-ական թվականների, այնպես էլ հետագա տարիների
բարեփոխումները առաջադրում էին տնտեսավարող սուբյեկտների տնտեսա-
կան ինքնուրույնության շրջանակների որոշակի ընդլայնում: Սակայն էկոնո-
միկայի լծացման ընթացքը արագացավ հենց այն պատճառով, որ տնտեսա-
յան բարեփոխումները էական դեր չկատարեցին իրական տնտեսական ազա-
տություն ապահովելու ճանապարհին:

Տնտեսական ինքնուրույնության շրջանակները բոլորովին այլ են շուկա-
յական էկոնոմիկայի պայմաններում: Սեփականության ցանկացած ձևի վրա
հիմնված տնտեսավարող սուբյեկտներից յուրաքանչյուրը պարտավոր է ինք-
նուրույն ընտրելու գործունեության այն բնագավառը, որը ավելի մեծ հնա-
րավորություն է տալիս իր սեփականության ավելացման գործում, թողար-
կելու այն արտադրանքը, որը ավելի լայն պահանջարկ ունի շուկայում, կի-
րառելու արտադրության ու աշխատանքի կազմակերպման այնպիսի մեթոդ-

ներ ու եղանակներ, որոնց օգնությամբ հնարավոր է ավելի արդյունավետ Եպտագործել իր ռեսուրսները և, վերջապես, որ ամենակարևորն է, պատասխանատվություն կրել սեփական որոշումների ու վճիռների համար: Այլ խոսքով, տնտեսավարող սուբյեկտները շուկայական էկոնոմիկայում հանդես են բերում լիակատար տնտեսական ազատություն: Նման ազատությունը տնտեսավարման ընթացքին թույլ չի տալիս ցուցաբերելու անկազմակերպ ու անարխիկ վարք մի պարզ պատճառով: Դա այն է, որ շուկան անողոք է տնտեսական կազմակերպման որոշումների ու վճիռների նկատմամբ, որ շուկայի սլահանջներից չբխող և նրա «կամքին» չենթարկվող ամեն մի որոշում կարող է կործանարար հետևանքներ ունենալ տնտեսավարող սուբյեկտների համար: Ընտրելով, թեև ազատ են տնտեսավարողների միտքն ու ձեռքերը, բայց և այնպես շուկան դնում է տնտեսավարման կոշտ ու կտրուկ պայմաններ և ստիպում բոլոր տնտեսավարողներին ենթարկվելու շուկայական կարգ ու կանոնին՝ «տնտեսական շահագրգռվածության հզոր զնդանի իշխանությունը»¹: Այդ պայմաններում տնտեսավարողների ինքնուրույնությունը տնտեսական ազատության նոր աստիճան է ձեռք բերում: Տնտեսավարողի առջև դրվում են նոր պրոբլեմներ: Այդ բոլոր հարցերը, որոնք նախկինում լուծվում էին տնտեսական ընդհանուր կենտրոնի կողմից՝ ե՞րբ, ի՞նչ, որքա՞ն, ո՞ւմ համար և ինչպե՞ս արտադրել այս կամ այն արտադրանքը, այժմ պետք է որոշեն տնտեսավարողները:

Այս հարցերից որևէ մեկի անբավարար լուծումը կարող է ճակատագրական լինել տնտեսավարող սուբյեկտի համար: Հետևաբար, տնտեսավարող սուբյեկտը պարտավոր է իր ազատությունը կաշկանդել որոշակի շրջանափակումներում, ամենաճշգրիտ ձևով հաշվարկել իր գործունեության հնարավոր հետևանքները, դրսևորել փորձի, հմտության, կանխագուշակման, համարձակույթի, գործարարության այն բոլոր պահանջները, որոնք ապահովելու են վերը թվարկած հարցադրումների անթերի լուծումը: Այլ խոսքով, շուկան ստիպում է ազատությունը դիտարկել որպես անհրաժեշտության գիտակցում և դրա դրսևորումների գործնական իրագործում: Անհրաժեշտության դրսևորումները կայուն չեն: Նրանք փոփոխվում են մի դեպքում շատ արագ, մի այլ դեպքում հանդես են բերում փոփոխման որոշակի օրինաչափություն, մի երրորդ դեպքում դրսևորումը կարող է պատահական (ստոխաստիկ) բնույթ կրել: Շուկայի պահանջների կատարումը հնարավոր է տնտեսական կյանքի բարդ ու բազմագործուն երևույթների ընկալմամբ ու ճշգրիտ իրականացմամբ: Շուկայական անհրաժեշտությունը պարունակում է տնտեսական հարաբերությունների ինքնակարգավորման մի այնպիսի մեխանիզմ, որին ենթարկվում են բոլոր տնտեսավարող սուբյեկտները: Փորձենք շուկան պատկերացնել որպես գնագոյացման մեջ պահանջարկի ու առաջարկի, փոխանակության ընթացքում՝ մատակարարների ու սպառողների, արտադրության ժամանակ՝ ձեռնարկությունների միջև մրցակցության և կոոպերացիայի ուղղակի և հակադարձ կապերով լայն զարգացած ինքնակազմակերպվող բաց տնտեսական համակարգ: Պարզ է, որ այդ համակարգում տնտեսավարողների ազատությունը կանոնակարգվում է տնտեսական, իրավական բազմաթիվ նորմերի ու պահանջների հիման վրա, և նրանց խնդիրն է այդ նորմերի շրջանակներում իրականացնել սեփական տնտեսական որոշումներ կայացնելու տնտեսական ազատությունը: Շուկայական ազատությունը չի բացառում պետության միջամտությունը այդ ինքնակարգավորվող համակարգի գործունեությանը: Ընդհակառակը, պետության միջամտությունը, նրա «կարգավորող ձեռքի» ազդե-

¹ Н. К. Смеляков. С чего начинается родина. М., 1975, с. 420.

ցության կատարելությունը տնտեսական ազատության դրսևորման վրա զգաց-
վում է իրավական ու տնտեսական այն դաշտի ստեղծմամբ, որի պայման-
ներում ինքնակարգավորվող շուկայական համակարգը գործում է անխափան:

Տնտեսական ազատության իրագործման հաջողությունը պայմանավոր-
ված է տնտեսավարման «խաղի կանոնների» ամբողջության կատարելությամբ,
նրանց տնտեսական նպատակահարմարությամբ ու իրավական հավասարու-
թյուն ապահովող նորմերի կայունությամբ:

Տնտեսական համակարգի գործունեությանը պետության միջամտության
հարցը տնտեսական մտքի կողմից քննարկվել է դեռևս կապիտալիստական
հարաբերությունների ձևավորման ու զարգացման վաղ շրջանից սկսած: Դեռևս
անգլիական դասական տնտեսագիտության նախահայր Ա. Սմիթը ձևակերպեց
պետության դերը մարդկանց քաղաքական ու տնտեսական ազատության ա-
պահովման գործում²: Նա գտնում էր, որ պետությունը իրականացնում է երեք
ֆունկցիա. առաջին՝ հասարակությանը պաշտպանում է այլ հասարակության
կողմից ներխուժման ենթարկվելուց, երկրորդ՝ հասարակության յուրաքան-
չյուր անդամին պաշտպանում է մյուսների կողմից հալածվելուց, և ստեղծ-
վում է արդարադատության համակարգ, երրորդ՝ ստեղծում և պահպանում է
հասարակական այնպիսի հիմնարկներ, որոնք պաշտպանում են ոչ թե առան-
ձին մարդկանց կամ խմբերի, այլ ողջ հասարակության շահերը:

Ա. Սմիթի պատվիրանները պետության տնտեսական ու քաղաքական
դերի մասին սկզբունքային են: Իհարկե, պետության գործառնությունները տըն-
տեսական կյանքի նորմալ գործունեության համար ընդգրկում են նաև այլ
պահանջներ: Դրանք վերաբերում են պետության օրենսդրական, գործադիր,
իրավապահ և այլ ինստիտուցիոնալ մարմինների ներդաշնակ կառուցվածք-
ների ստեղծմանը և նրանց իրավասության շրջանակների ճշգրիտ սահմանա-
զատմանը: Սակայն թվարկած երեք պահանջները հիմնականում արտահայ-
տում են այն կարևորագույն խնդիրները, որոնք պետությունը պարտավոր է
իրագործել շուկայական ազատ տնտեսավարման համակարգի գործունակու-
թյան ապահովման համար:

Տնտեսական համակարգի վրա պետական ազդեցության մեթոդների, ձե-
վերի, շափի, միջամտության աստիճանի մասին տնտեսագետների շրջանում
նույնպես գոյություն ունի կարծիքների ծայրահեղություն: Մի կողմից՝ Զ.
Քեյնսը և նրա հետևորդները (է. Հանսեն, Զ. Հիքս, Պ. Սամուելսոն) գտնում
են, որ պետությունը ակտիվ միջամտություն պետք է ցուցաբերի երկրի տըն-
տեսական կյանքին և զանազան լծակներով կարգավորի շուկայական համա-
կարգը, մյուս կողմից՝ Քեյնսի նորագույն հակառակորդները (Մ. Ֆրիդման,
Ֆ. Հայեկ, Յա. Կորնայ) գտնում են, որ պետական ամեն մի միջամտություն
շուկայական համակարգին՝ մեծացնում է շուկայի լարվածությունը և զրկում
նրան ինքնակարգավորման հնարավորությունից³: «Ցանկացած հասարակու-
թյան մեջ մասնավոր ձեռնարկությունների և պետական մարմինների միջև
կոնտակտների դեպքում կարող են առաջանալ կորուպցիայի երևույթներ»⁴:

Շուկայական համակարգին պետության միջամտության հարցի քննար-
կումը չի կարելի կատարել վերացական ձևով: Յուրաքանչյուր կոնկրետ պայ-

² Տե՛ս Աдам Սմիթ. Исследование о природе и причинах богатства народов, т. 1, М., 1935:

³ Տե՛ս Дж. М. Кейнс, Общая теория занятости, процента и денег. М., 1978. И. Самуельсон. Экономика. М., 1992 (в двух томах). Я. Корнай, Бюрократия и рынок.—«Вопросы экономики», 1989, № 12. Ф. А. Хайне, Дорога к рабству, Лондон, 1983.

⁴ Я. Корнай, Путь к свободной экономике, М, 1990, с. 59.

մաններում պետության միջամտությունը կարող է նպատակահարմար լինել որոշակի շահով ու ձևով:

Ուստի պետական միջամտության շահանիշների պրորբեմը անհրաժեշտ է քննարկել էկոնոմիկայի զարգացման տարբեր իրավիճակների համար, քանի որ այն, ինչ կարող է լինել ազատության կաշկանդիչ, մեկ այլ դեպքում կարող է դառնալ ազատության ապահովման գրավական:

Շուկայական ինքնակարգավորման գործում պետության միջամտության հարցի պարզաբանման համար փորձենք դիտարկել այն բնագավառների ամբողջությունը, որոնք պետության, որպես քաղաքական-տնտեսական-իրավական սուբյեկտի, բաղադրյալներն են: Դրանք են՝ քաղաքական կազմակերպչածությունը, տնտեսական զարգացումը, երկրի պաշտպանունակությունը, բրնակչության սոցիալական ապահովվածությունը, բնական ռեսուրսների վերարտադրության կազմակերպումը և արդյունավետ օգտագործումը, շրջակա միջավայրի պահպանումը, բնակչության նորմալ վերարտադրությունն ու քաղաքակրթումը, հասարակության անդամների ֆիզիկական ու հոգեբանական կերպարի ստեղծմանը վերաբերող այլ բաղադրյալները: Թվարկված բաղադրիչների մեջ տնտեսական զարգացումը մնացած բոլոր բաղադրիչների կարգավորման հանգուցակետն է, մյուսների իրագործման բանալին: Ուստի պետության միջամտությունը տնտեսական զարգացման կարգավորմանը զգացվում է բոլոր իրավիճակներում: Սակայն այդ միջամտության անհրաժեշտ աստիճանը որոշվում է տնտեսական զարգացման իրավիճակով: Պետական միջամտության շահանիշը պատկերացնելու համար փորձենք համեմատել այդ գործընթացը երեխաների կյանքի ընթացքում ծնողների միջամտության հետ: Բրե՛կ է երեխայի ամենաշնչին հիվանդության դեպքում յուրաքանչյուր ծնող նրա համար ցուցաբերում է ավելի շեշտված հոգատարություն, չնայած ծնողական հոգատարությունը որպես կանոն հավասարակշռվում է բոլորի համար: Նման համեմատությունը հուշում է, որ էկոնոմիկայի զարգացման գործում հանդես եկող ամեն մի խոչընդոտի, ձևավորվող անբնական վիճակների, տնտեսական անկման ու աղետալի դրությունների դեպքում պետության միջամտությունը էկոնոմիկայի կարգավորման վրա նույնիսկ շուկայական հարաբերությունների պայմաններում խիստ մեծացման կարիք է զգում: Ինչով է բացատրվում պետության միջամտության փոքրացման կամ մեծացման կարիքը շուկայական էկոնոմիկային անցման իրավիճակներում: Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է պարզագույն պատկերացում շուկայի, որպես ինքնակարգավորվող համակարգի, վիճակների մասին:

Ապրանքների ու ծառայությունների, աշխատուժի ու կապիտալի շուկաներում կարգավորման մեխանիզմը կարող է գործել երկու տարբերակներով: Մի դեպքում նման կարգավորումը տեղի է ունենում պահանջարկի ու առաջարկի միջև գոյություն ունեցող ուղղակի և հակադարձ կապերի գործունեությամբ, այսինքն՝ ինքնակարգավորմամբ: Շուկայական ինքնակարգավորումը հատուկ է շուկայի կայուն հավասարակշիռ վիճակին: Կայուն հավասարակշիռ վիճակը շուկայի այն դրությունն է, որի դեպքում արտաքին ամենաշնչին ազդեցությամբ նրա վիճակը աննկատելի փոփոխվում է, իսկ այդ ազդեցության բացակայության դեպքում շուկան ընդունում է իր նախկին վիճակը: Այդպիսի պարզագույն օրինակ է եղանակի կտրուկ փոփոխության ազդեցությունը կոլտնտեսային շուկայում ապրանքների գների կարճաժամկետ ատատանումների վրա, երբ հաջորդ օրերին պահանջարկի և առաջարկի հարաբերակցության կայունացման շնորհիվ գները նորից կայունանում են:

Մյուս դեպքում, երբ պահանջարկի և առաջարկի միջև հարաբերակցությունը խախտվել է այն շահով, որ ինքնակարգավորում տեղի ունենալ չ

կարող, անվանում ենք շուկայի անհավասարակշիռ վիճակ: Անհավասարակշիռ շուկան ենթադրում է գների խիստ մեծ տատանումներ, որոնք կարող են հանգեցնել քաոսային ինքնաբերաբար կազմակերպվող հարաբերությունների, իսկ եթե բացակայի նաև այդ գործընթացների պետական կարգավորումը, ապա կարող են ձևավորվել նաև սոցիալ-տնտեսական աղետալի վիճակներ: Դրա պարզագույն օրինակը զանազան ապրանքների կտրոնային վաճառքի կազմակերպումն է, որի բացակայության դեպքում բնակչության սոցիալական ցածր ապահովվածություն ունեցող մասը կարող է ամբողջությամբ զրկվել տվյալ ապրանքի սպառումից՝ գների խիստ արագ «թռիչքի» պատճառով:

Ինչպես տեսնում ենք, շուկան ինքնակարգավորման ենթարկվում է հավասարակշռությունից փոքր շեղումների դեպքում: Մեծ շեղումների դեպքում շուկայական կարգավորման ֆունկցիան ինքնաբերաբար չի իրագործվում և ինքնակարգավորման մեխանիզմը չի գործում: Նման իրավիճակում էր նաև հանրապետության էկոնոմիկան շուկայական մեխանիզմին անցնելու և գրեթե արձակման պահին:

Ուստի շուկայական մեխանիզմի դործունակության ապահովման և ստանցցավազին ցնցումների շուկային անցնելու համար պետության առջև առանձնահատուկ խնդիրներ դրվում են հատկապես այդ ժամանակահատվածում: Պետական առանձնահատուկ միջամտության անհրաժեշտությունը խիստ ըզգացվում է հատկապես մեր երկրում, որը վերջին 70 տարում տառապել է վարչահրամայական համակարգի տնտեսական ու քաղաքական ֆանտազիայով ու խաբկաբով, և ապրանքային զանգվածների պակասը ակնհայտ է եղել բոլոր ժամանակներում:

Այսպիսով, պետության միջամտությունը էկոնոմիկայի զարգացման ներկա ընթացքում խիստ անհրաժեշտ է այն պարզ պատճառով, որ շուկայական էկոնոմիկային անցնելու պահին դրսևորվում են անբնականոն երևույթներ, որոնք ժամանակին շահաթահարելու դեպքում հանգեցնում են հասարակական կյանքի աղետներին:

Զանազան պատճառներով տնտեսական անկում ունեցող, ինչպես նաև տնտեսական մի համակարգից մյուսին անցնող երկրներում անցումը շուկայական հարաբերություններին ծնում է անցանկալի երևույթներ՝ սոցիալական անհավասարություն, գիտության և գիտական հետազոտությունների արգելակում, համապետական ծրագրերի իրականացման խոչընդոտներ: Այսպես, հատկապես սկզբնական շրջանում, երբ հասարակության անդամների մի մասը զանազան ձևերով կուտակել է հսկայական ունեցվածք, ամեն գնով ցանկանալով լիովին բավարարել իր սպառման պահանջները, ակտիվորեն նպաստում է ամենաանհրաժեշտ նյութական բարիքների գների «թռիչքին», տեղի են ունենում սոցիալական ցնցումներ: Մինչդեռ հասարակության մի կերպ իրենց պահանջմունքները բավարարող բնակչության մասը զրկվում է սպառման ամենաանհրաժեշտ առարկաները ձեռք բերելու հնարավորությունից: Դա հատկապես զգացվում է գների ազատ արձակման սկզբնական շրջանում, երբ գների բարձրացման փոխհատուցումը հաշվարկվում է պետական գների բազայի հիման վրա և այն էլ միայն ապրանքների մի մասի գծով, իսկ շուկայական գները մի քանի տասնյակ անգամ գերազանցում են նախատեսվածին:

Շուկան, հատկապես անցման շրջանում, դրսևորում է պահպանողականություն գիտության զարգացման, գիտական հետազոտությունների իրականացման և ներդրման նկատմամբ: Եթե խոշոր ձեռնարկությունները, միավորումները կոնստրուկտորական մշակումներ իրագործելու և ներդնելու հնար-

րավորություն ունեն, ապա մասնավոր, մանր ձեռնարկությունները զրկվում են այդպիսի հնարավորությունից:

Շուկան չի արձագանքում նաև համապետական, ազգային նշանակություն ունեցող սոցիալական, բնապահպանական և այլ ծրագրերի իրագործման պահանջներին: Շուկայական կատարյալ էկոնոմիկայի ստեղծումը միայն վերջին հաշվով կարող է նպաստել նման ծրագրերի իրագործման համար միջոցների ստեղծմանը, իսկ անցման շրջանում դրանք մնում են անլուծելի:

Այս ամենը պահանջում են պետության ակտիվ միջամտություն շուկայական հարաբերությունների կարգավորման հարցում: Ընդ որում անցման փուլում այդ միջամտությունը ավելի ընդգրկված ձևով պետք է կատարել սոցիալական արդարության, տնտեսական կայունության, գործունեության արդյունավետության, քաղաքական իրավիճակի ու բաշխման հարաբերությունների կանոնավորման և տնտեսավարման իրավահավասար պայմանների ստեղծման բնագավառներում:

Շուկայական էկոնոմիկան, ինչպես նշվեց, սոցիալական անարդարության ստեղծման պոտենցիալ լայն հնարավորություն ունի:

Այդ անարդարության հաղթահարման ճանապարհին պետության խնդիրն է տնտեսական քաղաքականության որոշակի միջոցներով՝ որոշ ապրանքների օճերի սահմանման, հարկային և այլ լծակներով հարթել այդ անարդարությունը: Խոսքը վերաբերվում է սպառման բնագավառի վրա պետության ազդեցության ուժեղացմանը, որպեսզի հասարակության խիստ ցածր եկամուտ ունեցողները չզրկվեն ամենաանհրաժեշտ սպառման առարկաներ ձեռք բերելու հնարավորությունից: Դա սովորաբար կատարվում է նվազագույն աշխատավարձի ավելի ազատ աճի, նվազագույն կենսաթոշակների, նպաստների ու բնակչությանը ցույց տրվող օգնության այլ ձևերի շահերի ավելացման ճանապարհով:

Պետության տնտեսական կայունացման քաղաքականությունը նպատակաուղղված պետք է լինի արտադրության առանձին ճյուղերում տեղի ունեցող արտադրության ծավալների կրճատման կանխմանը, դրա համար միջոցառումների մշակմանը և իրականացմանը, պետական բյուջեի ճեղքվածքի վերացմանը, դրամի արժեզրկման գործընթացի հաղթահարմանը, սեփական դրամի արտաքին արժույթային կուրսի պահպանմանը և այլ միջոցառումներին, որոնք շուկայական հարաբերությունների բնականոն ձևավորման յուրահատուկ կատալիզատորներ են:

Տնտեսական կայունացման պետական քաղաքականությունը պետք է հենվի այն հիմնադրույթի վրա, որը տնտեսությունում և քաղաքացիական ստրատեգիական ծրագիրը և առանձին ճյուղերի ձեռնարկությունների ստրատեգիան կարող են միմյանց չհամապատասխանել: Ուստի երկրի զարգացման ստրատեգիական ծրագիրը չպետք է զրկի ձեռնարկությանը տնտեսական ազատությունից, այդ ձեռնարկության գործունեության վրա պետք է ազդի տնտեսական մեթոդներով, հաճախ պետական պատվերներով՝ շահագրգռելով այս կամ այն արտադրանքի արտադրության գործում:

Տնտեսական կայունացման ամենահիմնական պայմաններից մեկն էլ արժույթային կուրսի պահպանումն ու դրամի ազատ փոխանակելիության ապահովումն է: Ձեռնարկությունների տվյալ իրավունքները արտաքին տնտեսական հարաբերությունների ստեղծման գործում խիստ ձևական բնույթ են կրելու այնքան ժամանակ, քանի դեռ արտաքին առևտրի միջոցով գնումներ կարող են կատարել միայն այն ձեռնարկությունները, որոնք սեփական արտադրանք են արտահանում այլ երկրներ և արտաքին արժույթային միջոցներ ունեն: Դրամի ազատ փոխանակության դեպքում այդպիսի հնարավորություն

կունենան նաև արտադրանք շարտահանող ձեռնարկությունները:

Պետության գործունեության տնտեսական արդյունավետությունը վերաբերում է շուկայական էկոնոմիկայի նեգատիվ երևույթների վերացմանը, որոնք կարող են կապված լինել ապրանքների առաջարկի ու պահանջարկի փոխհարաբերության կանխատեսման ընթացքում թույլ տրված սխալների հետ: Պետության հիմնական ֆունկցիան այդ հարցում վերաբերում է ձեռնարկության գործունեությունից անկախ ձևավորվող այն հանդամանքների վերացմանը, որոնք տվյալ ապրանքարտադրողի համար արտաքին գործոնի դեր են խաղում: Դրանք հաճախ կապվում են էկոլոգիական բարենպաստ վիճակի, բնական ռեսուրսների օգտագործման պայմանների ստեղծման հետ: Այդ առումով հանրապետության ձեռնարկությունների համար կարևոր նշանակություն ունի տրանսպորտային փոխադրումների պայմանների ստեղծումը, մի հարց, որը վարչատարածքային ու ազգամիջյան հակասությունների պատճառով այժմ անլուծելի բնույթ է ստացել:

Շուկայական էկոնոմիկային անցնելու ընթացքում պետության արդյունավետ գործունեությանը վերաբերում է «բաց դռների» քաղաքականության անցնելը, որպեսզի շուկայական հարաբերությունների ստեղծման ընթացքում սարքերություններ չդրվեն արտադրողի ու սպառողի ազգային պատկանելիության, քաղաքական հայացքների, հավատի և այլ հատկանիշների միջև: Քանի դեռ սպառողը ապրանքարտադրողին ընտրելու է վերը թվարկած հատկանիշներից որևէ մեկի հիման վրա, շուկայական էկոնոմիկան ազատություն ապահովել չի կարող:

Եվ վերջապես, պետության կարևորագույն ֆունկցիան տնտեսավարման իրավահավասար պայմանների ստեղծումն է սեփականության տարբեր ձևերի վրա հիմնված արտադրողների, ինչպես նաև տնտեսության տարբեր տիպերի համար:

Շուկայի պետական կարգավորումը չի հակասի ձեռնարկատիրական գործունեության ազատությանը, եթե տնտեսավարումը հիմնված լինի այնպիսի օրենքների ու օրենսդրական ակտերի վրա, որոնք ապահովում են տնտեսավարողների իրավահավասարությունը, մրցակցությունը, տնտեսական փոխադարձ պատասխանատվությունը: Դա հատկապես անհրաժեշտ է մանր ապրանքարտադրողների իրավունքների պաշտպանության, նրանց սեփականության պաշտպանությունը պետականին հավասարեցնելու համար: Տասնամյակներ շարունակ մեր հասարակության մեջ արմատացել էր այն համոզմունքը, որ անձնական ունեցվածքը հակամարդկային է: Դա հասել էր այն աստիճանի, որ նույնիսկ քաղաքացիների անձնական սեփականությունը իրավական պատասխանատվությամբ չէր հավասարեցվում պետականին և դրա հափշտակության համար օրենսգրքում սահմանված էին խիստ ցածր պատճառափեր, քան պետականինը:

Շուկայական էկոնոմիկայի պայմաններում էկոնոմիկայի պետական կարգավորումը չի կաշկանդի ձեռնարկատիրական գործունեության ազատությունը միայն բազմասեփականության ձևերի պայմաններում: Նկատի ունենալով, որ սեփականության իրավունքը մարդուն ազատում է կաշկանդավածությունից, թույլատրում հասարակական կյանքում իր տեղը գտնել իր նախասիրություններին համապատասխան, երաշխավորում իր և իր ընտանիքի ապահովածությունը, իրագործում մարդու երազանքը իր աշխատանքի արդյունքները ժառանգություն թողնելու գործում: Տասնամյակների փորձը ցույց տվեց, որ սեփականազուրկ մարդուն ոչինչ կորցնելու գաղափարը հուսալքում և անտարբեր է դարձնում հասարակական առաջադիմության նկատմամբ: Այդ է պատճառը, որ անցումը շուկայական էկոնոմիկային պահանջում է իրականացնել

սեփականաշնորհում: Սեփականաշնորհման ելանակներն ու մեթոդները կարող են տնտեսական ազատության տարբեր աստիճանի տարբերակներ ապահովել, ուստի պետական կարգավորման ազդեցության միանգամից անկում թույլ չտալու համար նպատակահարմար է սեփականաշնորհումը իրականացնել փուլ առ փուլ: Այդ բնագավառում թույլ տրված հապճեպությունը կամ սվեյտորդ դանդաղկոտությունը կաշկանդում են շուկայական հարաբերությունների բնական ձևավորմանը, հանգեցնում տնտեսական անկարողության, որի հետևանքով տնտեսական կյանքը դառնում է անկառավարելի, և պետությունը կորցնում է էկոնոմիկայի կարգավորման վրա ազդելու հնարավորությունը: Այդպիսի սեփականաշնորհման խոչընդոտներ հանդես եկան հատկապես ՀՀ-ում, քանի որ գյուղատնտեսական արտադրության իրավական և տնտեսական սեփանկյունից չնախապատրաստված սեփականաշնորհումը շուղեկցվեց տնտեսության մյուս ճյուղերում սպասվող սեփականաշնորհմամբ:

Պետության կարգավորման ֆունկցիան չի հակասում ձեռնարկատիրական գործունեության ազատությանը, եթե տնտեսական ռեֆորմները հենվում են քաղաքական բնութի բարեփոխումների վրա, ինչպիսին են միջազգային հարաբերությունների զարգացման, երկրի ազատ աշխատուժի արտահոսքի և ներհոսքի, կադրերի պատրաստման և փոխանակման, արտաքին աշխարհի հետ ազատ կապերի հաստատման պայմանների ստեղծումը, երկրի սահմանների բացումը:

Պետության ֆունկցիան էկոնոմիկայի կարգավորման հարյուր չպետք է ընդունել շուկայական ինքնակարգավորման համակարգը պետական կենտրոնացված կառավարմամբ փոխարինելու իմաստով, այլ որոշակի տնտեսաֆան լծակներով շուկայի իրավիճակի վրա ազդեցության ուժեղացման հնարավորություններով: Հատկապես շուկայական էկոնոմիկային անցման շրջանում ներգործության ավելի գործունակ մեթոդներ կարող են լինել պետական պատվերները, սահմանային գները, հարկային առավելությունները, պետական կենտրոնացված կապիտալ ներդրումները, պետական ռեզերվների, պաշարների ստեղծումը:

Պետական պատվերները սեփականության տարբեր ձևերի պայմաններում դործող ձեռնարկություններին ու միավորումներին պետք է տրվեն պայմանագրային հիմունքներով, հաճախ ապահովելով պատվիրված արտադրանքի համար անհրաժեշտ հումքային ռեսուրսներ, դրանց համար սահմանելով փոխադարձ համաձայնեցված գներ՝ ելնելով սվյալ արտադրանքի շուկայական գրների մակարդակից:

Անցման շրջանում պետությունը պարտավոր է կիրառել սահմանային կամ կարգավորվող գների քաղաքականություն առաջին անհրաժեշտության ապրանքների համար: Իհարկե նման գները ժամանակի ընթացքում կրում են շուկայական գների մակարդակի ազդեցությունը, սակայն պետք է սահմանվի դրանց վերին սահմանը՝ խիստ տատանումներ թույլ չտալու համար: Նման քաղաքականության անհրաժեշտությունը զգացվում է հատկապես անցման շրջանի սկզբնական փուլում, քանի դեռ էկոնոմիկան անկում է ապրում, և տեղի է ունենում դրամի «թռիչքային» արժեզրկում: Հետագայում, երբ էկոնոմիկան սկսում է վերելք ապրել, և ապրանքների առաջարկը սկսում է գերազանցել պահանջարկին, և ապրանքային դեֆիցիտը այլևս էական ազդեցություն չի գործում դրամի արժեզրկման վրա, սահմանային գների քաղաքականությունը աստիճանաբար կարող է փոխարինվել ազատ գների քաղաքականությամբ:

Պետության հարկային քաղաքականությունը շուկայական էկոնոմիկայում դնագոյացման վրա ազդելու հիմնական լծակներից մեկն է: Հարկային քա-

դաքականության նպատակը պետք է լինի արտադրանքի որոշ տեսակների արտադրության ավելացման, էկոնոմիկայի առանձին բնագավառների զարգացման խթանումը: Այդ կապակցությամբ հարկային դրույթաչափերը պետք է տարբերակել առաջին անհրաժեշտության և ոչ առաջին անհրաժեշտության (ծխախոտ, ալկոհոլային խմիչքներ, պերճանքի առարկաներ) ապրանքների համար: Վերջիններիս համար սահմանվում են սովորաբար ակցիզային հարկեր:

Շուկայական էկոնոմիկայի պետական կարգավորիչ ազդեցությունը կենտրոնացված կապիտալ ներդրումների միջոցով անհրաժեշտ է երկրի տնտեսական, քաղաքական, բնապահպանական, պաշտպանական այլ խնդիրների լուծման համար: Կենտրոնացված կապիտալ ներդրումների միջոցով ավելացվում են այն ճյուղերի արտադրական կարողությունները, որոնք զանազան պատճառներով շուկայական ինքնակարգավորմամբ լուծվել չեն կարող: Կենտրոնացված կապիտալ ներդրումների միջոցով լուծվում են հատկապես արտադրական ենթակառուցվածքների զարգացման պրոբլեմները՝ տրանսպորտային մայրուղիների, գազամուղների, ջրային ռեսուրսների մատակարարման համակարգերի կառուցումները:

Պետական ռեզերվների, պաշարների ստեղծումը ազգային շուկայի կենտրոնացված կարգավորման այն ձևն է, որի օգնությամբ հնարավորություն է տեսողծվում պահպանել գների կայուն մակարդակ, շուկայի հավասարակշռվածություն: Դա պետք է կատարել հատկապես պահպանվող գյուղատնտեսական մթերքների (հացահատիկի, կարտոֆիլի, մսամթերքների, կաթի և այլ մթերքների) պետական ռեսուրսներ ձևավորելու, դրանք պահպանելու և տարվա ընթացքում բնակչությանը ուժեղ մատակարարելու համար: Նման քաղաքականություն մեր հանրապետությունում առայժմ իրականացվում է հացահատիկի գծով:

էկոնոմիկայի պետական կարգավորման քաղաքականության հիմնահարցերից մեկը բաշխման հարաբերությունների վրա պետական ազդեցության ուժեղացումն է:

Անցումը շուկայական հարաբերություններին արմատական տեղաշարժեր է առաջացնում հատկապես բաշխման հարաբերություններում: Դա բացատրվում է նրանով, որ կենտրոնացված պլանավորման ու կառավարման նախկին մեխանիզմը պարունակում էր բաշխման հարաբերությունների կարգավորում նյութական ու ոչ նյութական բնագավառների, նյութական արտադրության ճյուղերի, մասնագիտությունների և որակավորվածության տարբեր աստիճան ունեցող աշխատողների միջև:

Շուկայական էկոնոմիկայում պետությունը նման կարգավորում կարողանում է ամբողջական ձևով իրագործել ոչ նյութական արտադրության ճյուղերի համար: Նյութական արտադրության ճյուղերի աշխատավարձի կարգավորումը շուկայական նորմալ էկոնոմիկայում կարգավորվում է աշխատուժի սահմանափակում ու առաջարկի հարաբերակցությամբ: Եթե արտադրության զարգացման տեմպերը արագանում են և ստեղծվում են լրացուցիչ աշխատատեղեր, ապա աշխատուժը պահանջում է ավելի բարձր աշխատավարձ և ընդհակառակը՝ արտադրության ծավալի կրճատման և գործազուրկների բանակի ավելացման դեպքում աշխատուժի բորսայում աշխատանք փնտրողներին առաջարկվում է ավելի ցածր աշխատավարձ:

Պետական ձեռնարկություններում աշխատողներին առաջարկվում է սովորաբար նույնպիսի աշխատավարձ, ինչպիսին ձևավորվել է տվյալ փուլում սեփականության մյուս ձևերի պայմաններում աշխատողներին վճարելու համար: Պետությունը սովորաբար նյութական արտադրության աշխատողների

աշխատավարձի կարգավորմանը մասնակցում է սահմանելով աշխատանքային օրենսդրության նորմերը, նվազագույն աշխատավարձ մասսկան և տարիֆային ժամային դրույքները, աշխատավարձից գանձվող եկամտահարկի չափերը: Աշխատանքի վարձատրության այսպիսի մեխանիզմն արդյունավետ և նպատակահարմար է այն երկրների համար, որոնք էկոնոմիկայի անմիջական կառավարման պետական կառուցվածքներ չունեն կամ ունեն այդպիսի կառուցվածքներ միայն գործառական ծառայությունների համար:

Շուկայական էկոնոմիկային անցման շրջանում նյութական արտադրության աշխատողների աշխատանքի վարձատրության կազմակերպման գործում (եթե այն պետության կողմից անմիջականորեն չի կարգավորվում) առաջանում են մի շարք հակասություններ:

Առաջին հիմնական հակասությունը ձևավորվում է ձեռնարկությունների աշխատողների աշխատավարձի աճը որևէ ձևով չկարգավորելու հետևանքով: Այսպես, արտադրական ձեռնարկություններին թույլատրվում է սահմանելու աշխատավարձի այնպիսի դրույքներ, որոնք մի քանի անգամ գերազանցում են նույն կամ ավելի բարձր որակավորում ունեցող ոչ նյութական արտադրության ճյուղերի նույն մասնագիտության անձանց աշխատավարձին: Վերջինս աշխատուժի հոսունության ավելացման և ոչ նյութական արտադրության բրնագավառների, հատկապես կրթության համակարգի, հետագա ճգնաժամի պատճառ է դառնում:

Երկրորդ հակասությունը վերաբերում է նյութական արտադրության ճյուղերի պետական կառավարման մարմինների աշխատավարձի և արտադրության անմիջական օղակների աշխատողների աշխատավարձի մակարդակների մեծ տարբերությանը: Այսպես, եթե արդյունաբերության մի ճյուղի նախարարի աշխատավարձը, որը վճարվում է պետական բյուջեից, մի քանի անգամ ցածր է այդ նախարարի կողմից նշանակվող ձեռնարկության տնօրենի աշխատավարձից, ապա այն կօրուպցիայի արմատներ է պարունակում:

Երրորդ հակասությունը վերաբերվում է սեփականության տարբեր ձևերի պայմաններում որակավորման նույն աստիճան ունեցող աշխատողների աշխատավարձի տարբերությանը: Դեռևս պետական ձեռնարկություններում, կոոպերատիվ և այլ ձեռնարկությունների համեմատությամբ, խիստ բարձր է արտադրության տեխնիկական զինվածության մակարդակը, սակայն այդ ձեռնարկություններում աշխատող ինժեներատեխնիկական աշխատողների աշխատավարձը զգալիորեն զիջում է կոոպերատիվների նույն ցուցանիշին: Վերջինս աշխատուժի հոսքի և արտադրության տեխնիկական մակարդակի անկման լուրջ վտանգ է պարունակում:

Եվ վերջապես շուկայական էկոնոմիկային անցման սկզբնական փուլում տեղի է ունենում արդյունաբերական արտադրանքի գների ոչ հավասարաչափ բարձրացում: Արտադրանքի որոշ տեսակների գծով բնակչության պահանջարկը ավելի մեծ է, և դրանց նկատմամբ զգացվում է խիստ պակաս: Այդ ապրանքների գները խիստ բարձրանում են և թույլ են տալիս ավելի շատ աշխատավարձ վճարելու:

Իրականում նման ապրանքների առաջարկը չի որոշվել շուկայական պահանջարկի ազդեցությամբ, ուստի հետագայում այդ հակասությունը կարող է լուծվել շուկայական ինքնակարգավորմամբ: Անցման շրջանում պետությունը պարտավոր է հարկային քաղաքականությամբ կարգավորել խիստ մեծ պահանջարկ ունեցող ապրանքների արտադրության աշխատողների աշխատանքի վարձատրությունը:

Աշխատանքի վարձատրության կազմակերպման հարցում պետական միջամտությունը, մեր կարծիքով, պետք է իրագործել սոցիալական աղետներ

Թույլ շտախու, բարձր որակավորում ունեցող աշխատողներին խթանելու, աշխատուժի հոսունությունը կանխելու, երկրի տնտեսական զարգացման համար կարևորագույն նշանակություն ունեցող ճյուղերի զարգացման խթանման քաղաքականություն վարելու պահանջներից: Նշված սկզբունքների կիրառման հաջողությունը որոշիչ դեր կարող է խաղալ էկոնոմիկայի կայունացման գործընթացի հաջողությունը ապահովելու գործում:

Այսպիսով, էկոնոմիկայի պետական կարգավորման էությունը ամբողջապես փոփոխվում է շուկայական հարաբերությունների պայմաններում, ձևավորվում են տնտեսական զարգացման գործընթացի վրա պետական կառավարման ազդեցության նոր ձևեր, մեթոդներ, եղանակներ, որոնց կատարելության աստիճանը որոշիչ դեր ունի տնտեսական իրական ազատության ապահովման գործում:

էկոնոմիկայի պետական կարգավորման արդյունավետությունը խիստ բարձրանում է հատկապես այն դեպքում, երբ շուկայական էկոնոմիկային անցման շրջանի ամեն մի փուլի ժամանակ ընտրվում է ձեռնարկատիրական գործունեության ազատության այնպիսի աստիճան, որը առավել նպաստավոր դեր է խաղում հասարակական ընդհանուր առաջադիմության և սոցիալական ապահովվածության ստեղծման գործում: Տնտեսական ազատության էությունը, բովանդակությունը, շրջանակները ենթակա են մշտական փոփոխման և մեկընդմիջտ տրված, որոշված լինել շեն կարող: Ուստի ամեն մի երկրի կառավարության առջև դրված խնդիրներից կարևորագույնը էկոնոմիկայի զարգացման տվյալ պահի համար տնտեսական ազատության սկզբունքների ու շրջանակների ճշգրտումն է:

А. Б. ГУЩЯН, А. А. ГУЩЯН—Экономическая свобода и государственное регулирование экономики.—Переход к рыночной экономике в республиках бывшего СССР с новых позиций выдвинул два основных течения в литературе о роли государственного регулирования экономики.

В статье сделана попытка проанализировать сущность этих течений, а именно—сторонников такого вмешательства—кенсианцев и противников—неоклассиков, раскрыть основные пути государственного воздействия на экономический механизм рыночного саморегулирования такими экономическими рычагами, какими являются государственные заказы, предельные цены, налоговые льготы, государственные централизованные капитальные вложения, государственные резервы и запасы. Авторы придерживаются мнения, что в переходный период особенно необходимо государственное вмешательство в распределительные отношения. В этой связи обосновывается такая государственная политика организации оплаты труда, которая обеспечивает социальную справедливость, стимулирует развитие науки и техники, ограничивает текучесть кадров и т. о. способствует развитию важнейших отраслей хозяйства.